

տեանը հաստատուեցաւ, Նիկողայոս կայսրը իրեն նուիրակ անուանեց զինքը առ նոյն ատեանը. դժուարատար բռն մ'էր, որով պաշտօնեայն պիտի ջանար ցրուել այն ամենայն կասկածներն՝ որ Ռուսիոյ դէմ կը յառնէին։ Նոյնպէս լի էր դժուարութեամբ այն պաշտօնն ալ՝ որ յանձնուեցաւ իրեն 1854ին, անուանելով զինքը նուիրակ և ամենակար պաշտօնեայ 'ի վիեննա. տաժանելի եղաւ արդարեւ այս պաշտօնը խորիմի պատերազմին, և Աւստրիոյ ընթացքին համար, զոր կը բանեցընէր՝ արտաքոյ ամենայն ակնկալութեանց՝ Նիկողայոս կայսեր, որ կը յուսար թէ վիեննայի արքունիքը երախտագէտ պէտք է գտուի առ ինքն՝ յիշելով Ս. Դաշնակցութեան և Ունկարիոյ պատերազմին ատեն Ռուսիոյ առ նա մատուցած մեծամեծ օգնութիւնքը։ Այս պարագայիս մէջ Կորչաքոֆ իշխանին ցուցած վարչական մեծ յաջողակութեանը կը վկայեն 1855ին վիեննայ ժողովոյն մէջ բռնած տեղին, և 1856ն արտաքին պաշտօնեայ անուանիլն 'ի Բեղրոսպուրկ։

Դժուարին վիճակի մէջ էր Ռուսիան, երբ Ալեքսանդր Բ. կայսրը՝ Կորչաքոֆի վրայ դրած էր բոլոր իր վստահութիւնը, որ և համապատասխանեց անոր ակնկալեացը՝ զօրաւոր դործի մը ըլլալով մեծամեծ բարեկարգութեանց, որոնցմով Ալեքսանդր Բ. կը փափաքէր վերանորոգել իր կայսրութիւնը։ Խորիմի պատերազմէն ետքը ինքն եղաւ հեղինակ այն համաբաւարանամակին՝ յորում կը գրէր, թէ « Ռուսիան չերկնչիր, ինքզինքը կը զօրացնէ »։ այս բառերը կը ցուցնեն թէ ինչպիսի ճարտարամտութեամբ կը հոգար պետութեան գործերն ու օգուտը։

1856ին ընկերեց կայսեր 'ի վարսաւիա. և նոյն տարին 'ի Մոսկուա՝ Ալեքսանդրի կայսր պսակուելու առթով՝ ներքին խորհրդական անուանեցաւ, և Ս. Վլադիմիրի կարգին առաջին աստիճանի պատուանշանն ընդունեցաւ, և քիչ ետքը Ս. Անդրէասայ, որ տէրութեան առաջին կարգի նշանն է։

Այն թուղթերով որոնցմով կայսրը կը շնորհէր իրեն այս պատուանշանները, կ'իմացընէր Կորչաքոֆի արեւմտեան տէրութեանց հետ խաղաղութիւն հաստատելու համար ըրած մեծամեծ ծառայութիւնները։


Այս միջոցիս յարեաւ Լեհաց խռովութիւնը։— Բայց մենք դարձունենք աչքերնիս արիւնահեղ տեսարանէն, որուն պատմութիւնն իր էջերն ունի։

Կորչաքոֆ իշխանը՝ թէպէտ եօթանասնամեայ ծերունի, այլ իր վարչական գործունէութիւնը զինքը չէ թողուցած ինչպէս առջի տարուան Յունա-Տաճկական դժտութեան մէջ, նոյնպէս անցեալ տարւոյն Տաճկա-Եգիպտակա նին և Տալմացիայի ապստամբութեան մէջ ցըցուց։

Պ. ԲԱԶԻ ՄԱՐԶԱՏՈՒՆՆ Ի ԲԱՐԻԶ

Թէպէտ և քանի մը տարի է որ Պ. Բազ հիմնեց այս մարդատունը, որպէս զի աշակերտք մարմնակրթանք սորվին, բայց քիչ ատենուան մէջ այն աստիճան մեծցաւ անոր համբաւը՝ որ առողջութեան տաճար ըսուեցաւ։

Եւգինէոս Բազ իր մարմնակրթարանաց վրայ շարադրած գրքին մէջ անոնց մարդկային մարմնոյն վրայ ունեցած զարմանալի ազդեցութիւնները ապացուցած ըլլալով, ուզեց օրինակով ալ ցուցնել իր կանոններուն ճշմարտութիւնը. անոր համար այս մարդատունը կամ կրթարանը հիմնեց՝ մեծ մարդատուն աւանդանելով զանիկայ, ուր աշակերտաց բազմութիւն մը մասնաւոր մարմնակրթարանաց շարժմունքներով անդամոց կորովութիւն և բոլոր մարմնոյն կանոնաւոր զարգացում մը կու տան։ Այս կրթարանիս մէջ զինախաղութեան համար առանձին սրահ մը կայ, զատ են նաեւ գաւազանով կրթութեանց և բռնամարտութեան խաղուց սրահներն, և այլն։ Կան նաեւ ուրիշ սրահներ ալ՝ որոնք ջրաբուժութեան, մարմնոյ շփմանց և կա-



Թուածաղեղ առողմանց որոշեալ են . պակասաւոր սպայոց մարմնոյն համար ալ ուղղաւարտութեան սրահ մը կայ՝ որուն մէջ անանկ հիւանալի կազմարաններ կան՝ որ նոյն հիմնադրութեան այցելուաց զարմանքը կը գրաւեն , և հռչակաւոր բժշկաց և ուղղաւարտից գովեստները լսելու արժանի կ'ըլլան :

Մեր առաջիկայ պատկերը վարժապետին ներկայութեամբը խաղցուած բազկաց կըթիչ խաղ մը կը ներկայացնէ :

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԳԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՅ
ՅԱՓՐԻԿԷ

(Տես Հատ. ԻԷ. Էրես 371)

Լուսնոյ երկիրը՝ կ'ուզես ըսել, որ անանկ հեռու չէ . բայց ապահով եղիւր որ վտանգը նուազ չէ :

— Վտանգ, տորգոր Ֆերկըսընի պէս մարդու մը հետ :

— Չեմ'ուզեր յոյսերդ փճացնել, քաղաք ճոյ . բայց իր ձեռնարկած գործը պարզ խնդութիւն մըն է . չերթայ պիտոր :

— Չերթայ պիտոր . ուրեմն չես տեսած անոր օգապարիկը Պորոֆ՝ Միչէլլ պարոնայց գործատանը մէջ :

— Միտք ալ չունիմ երթալ ու տեսնալ :

— Բայց գեղեցիկ տեսարան մը կը կորսնցունես , պարոն : Ի՛նչ աղուոր բան . ի՛նչ գեղեցիկ ձև . ի՛նչ պրանչելինաւակ : Ի՛նչպէս աղէկ հանգիստ պիտոր ըլլանք անոր մէջ :

— Ուրեմն դու ալ հաստատուն մ'աւքդ գրած ես տիրոջը ընկերելու :

— Ե՛ս , պատասխանեց ճոյ համոզեալ եղանակաւ մը . ուր ալ ուզէ երթալ ես

իրեն կ'ընկերանամ : Այս միայն պակաս էր : Թողնու զինքը մինակ , յետ բոլոր աշխարհքը մէկտեղ քալելու : Եւ ո՞վ արդեօք իրեն նեցուկ պիտոր ըլլայ յոգնած ժամանակը . ո՞վ իրեն զօրաւոր ձեռք մը պիտոր կարկառէ գահավէժ մը ցատքելու համար . ո՞վ զինքը հոգայ պիտի՝ եթէ հիւանդանայ : Ոչ , Պարոն Տիք , ձոն միշտ իր տեղը պատրաստ պիտոր գտնուի տորգորին քովը . ի՛նչ կ'ըսեմ , մանաւանդ տորգորին՝ չորս կողմը :

— Ապրիս կտրիճա :

— Բայց դու ալ հետերնիս պիտոր գաս , ըսաւ ճոյ :

— Անտարակոյս , պատասխանեց ֆէն , նրաի . ըսել կ'ուզեմ՝ որ ես ձեզի հետ պիտոր գամ ինչուան ետքի վայրկեանը՝ որ արդիւն մ'ըլլամուէլ այսպիսի խենդութիւն մը չընելու : Նաև մինչև Զանգիպար պիտոր ետեէն երթամ , որպէս զի հոն ալ նմանապէս բարեկամի մը ձեռքը զինքը խենդ ձեռնարկութենէ մը ետ կեցընէ :

— Բան մը պիտոր չկարենաս արդիւնել , պարոն ֆէննրաի , ներէ ըսելուս : Տէրս զիւրաբորբօք զուխ մը չէ . երկայն ատեն կը մտածէ ձեռնարկել ու զած բանի մը վրայ , և երբ բան մը հաւտատուն կերպով կ'որոշէ , շատ սատանորդի պէտք է ըլլայ այն՝ որ կարող ըլլայ զինքը անկէ ետ կեցընել :

— Այդ տեսանք պիտոր :

— Այդ յուսով ինքզինքդ մի խաբեր : Բայց էականն աս է՝ որ դու ալ գաս : Քեզի պէս որսորդի մը համար , Ափրիկէն զարմանալի աշխարհք մըն է : Այս պէս ինչ ալ ըլլայ , չղղձաս պիտոր ճամբորդութեանդ վրայ :

— Ոչ անշուշտ , չղղձամ պիտոր , մանաւանդ եթէ այդ յամառը ստուգութեանը տեղիք տայ :

— Բայց աղէկ , ըսաւ ճոյ , զիտես որ այսօր կշիռքը պիտոր ըլլայ :

— Ի՛նչպէս կշիռքը :

— Ստոյգ , տէրս , դու և ես , իրեքս ալ պիտոր կշռուինք :

— Ինչպէս թէ ըլլայինք իրեք ձոքի :

— Ինչպէս թէ իրեք ձոքի ըլլայինք :

1 Հարաւային Թաղ մը՝ Ի Լոնտոն :